«Արդար Հայաստան» կուսակցության
ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՎՍՏԱՀԻ՛Ր, ՀԱՎԱՏԱ՛, ՓՈԽԵԼՈՒ՛ ԵՆՔ...

Սիրելի՛ Երևանցիներ,

Երևանի ավագանու ընտրությունները վճռորոշ նշանակություն ունեն ոչ միայն Երևանի, այլև՝ Հայաստանի առաջիկա տարիների զարգացման համար։

Հայաստանում արմատական փոփոխությունների ժամանակը մոտենում է, և այն պետք սկսել Երևանից։

Չպետք է թույլ տալ, որ Հայաստանում արմատավորվի քաղաքական մենիշխանություն, ինչի աղետալի դրսևորումներն ու արդյունքները տեսել ենք տարիներ շարունակ։

Երևան քաղաքում իրականացվում է սխալ, ոչ արդյունավետ կառավարում։

Երևանի ընտրովի վերջին 5 քաղաքապետերը չեն պաշտոնավարել իրենց ամբողջական ժամկետով՝ երկրի ղեկավարի կամ քաղաքական թիմի հետ ունեցած այս կամ այն խնդրի պատճառով։

Երևանի կառավարման համակարգը պետք է ենթարկվի հիմնովին վերափոխման, և ընտրված քաղաքապետը չպետք է դառնա ներիշխանական քմահաճույքների զոհ։

Մենք առաջարկում ենք Երևանում իրականացնել որակական ու ռազմավարական փոփոխություններ։

Մենք ունենք երիտասարդ, միաժամանակ՝ ներուժ ունեցող պրոֆեսիոնալ թիմ։

Սիրելի՛ երևանցիներ

Սեպտեմբերի 17-ին քվեարկե՛ք Երևան քաղաքում արդար կառավարման ու արդար Հայաստանի համար։

Մենք տրամադրված ենք վճռական և պայքարելու ենք յուրաքանչյուր քվեի համար։

Ոչինչ նախապես կանխորոշված չէ։ Ամեն ինչ կախված է լինելու Ձեր կամքից ու Ձեր քվեից։

Պարտության, պարտվողականության ու հիասթափության երթը պետք է կանգնեցնել ու շարժվել վերելքի ու հաղթանակի ճանապարհով։

Մեր ռազմավարական նպատակն է Երևանը դարձնել «Խելացի քաղաք», կանաչ ու այգի-քաղաք։ Այս ամենին հասնելու համար անհրաժեշտ է ստեղծել արդար հասարակություն և արդար Հայաստան։

Երևանը մշակութային, արդյունաբերական, կրթական և զբոսաշրջային քաղաք է, բայց նրա ընդհանուր զարգացվածության փիլիսոփայությունը հստակ և ուրվագծված չէ։

Առաջին հերթին անհրաժեշտ է կերտել Երևանցու կերպարը։
Ո՞վ է Երևանցին, կամ ո՞վ պետք է լինի Երևանցին։

Իսկ դրան հասնելու համար անհրաժեշտ է մշակութային ու արժեհամակարգային փոփոխություն։ Երևանցու բնավորություն է պետք ձևավորել։

Մենք վարելու ենք վատ սովորույթներից հրաժարվելու քաղաքականություն. փողոցներում ու բակերում չե՛նք թքում, աղբ չե՛նք նետում, այդ թվում՝ մեքենայից, փողոցային առևտրով չենք զբաղվում։

Երևանն ունի բոլոր հնարավորությունները դառնալու տարածաշրջանի մեգապոլիսը՝ ապահովելով տարեկան մի քանի միլիոն զբոսաշրջիկի այցելություն։

Հնարավոր է Երևանի և Էջմիածին քաղաքի՝ որպես քրիստոնեական աշխարհի յուրօրինակ կենտրոններից մեկի միջև ստեղծել այնպիսի պատմամշակութային ու զբոսաշրջային կոմպլեքս, որը երկու քաղաքները կդարձնի տարածաշրջանային զբոսաշրջության կենտրոն։

Այս ընտրությունները մեր վերջնական նպատակը չեն։ Մենք գնալու ենք գլոբալ փոփոխությունների հետևից և, ի վերջո, հասնելու ենք մեր նպատակին…

Երևանի թվով 10 ռազմավարական խնդիրները.

1. Հանրային տրանսպորտ,
2. Վտանգավոր երթևեկություն, կաթվածահար խցանումներ, կայանատեղիների բացակայություն, քարե ու մետաղյա ավտոտնակներ,
3. Աղբահանություն և աղբի վերամշակման համակարգ,
4. Բնապահպանություն, կանաչապատ տարածքների, անտառների, այգիների ու բուսականության սակավություն,
5. Քաղաքաշինություն, ապօրինի շինարարություն, բնակարանային ֆոնդի բարելավում,
6. Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանած անհատական բնակելի տների կարգավիճակի հստակեցում,
7. Ճանապարհների ոչ բարվոք վիճակ, երկրորդական փողոցներում գիշերային լուսավորության բացակայություն,
8. Փողոցային առևտուր, թափառող շներ,
9. Հին վերելակներ, բակերի բարեկարգումներ, խաղահրապարակներ,
10. Ժամանակակից բոլոր չափորոշիչներին համապատասխանող կրթօջախներ, հիվանդանոցներ, պոլիկլինիկաներ և այլն…

Իրավիճակի գնահատում

1. Այդպես էլ չձևավորվեց նոր տրանսպորտային ցանցը, իրականություն չդարձավ մեկ միանսական տոմսային համակարգը, հարյուր հազարավոր մարդիկ շարունակում են կռացած վիճակում մեկնել աշխատանքի ու վերադառնալ տուն՝ նսեմացած ու ավելի հոգնած վիճակում:
2. Ոչ բավարար երթևեկության մշակույթի առկայությունը, խցանումների հետևանքով Երևանի երթևեկության կատվածահար վիճակն ահռելի վնաս են հասցնում տնտեսությանը, գործարարությանը, արդյունաբերությանը:
3. Աղբահանության խնդիրը ռազմավարական առումով մնում է չլուծված: Էկոմշակույթի, աղբի վերամշակման, ինչպես նաև բակային մաքրության ապահովման համակարգի բացակայությունը վկայում է, որ Երևանը դժվար է համարել մաքուր քաղաք:
4. Երևանի կեղտոտ օդը, կանաչի ու անտառների բացակայությունը, այգիների, պուրակների սակավությունը լրջորեն սպառնում են քաղաքի էկոհամակարգին ու յուրաքանչյուրիս առողջությանը:
5. Երևանը չունի քաղաքաշինական ռազմավարություն: Ով որտեղ ուզում՝ կառուցում է: Տրված չէ այն հարցի պատասխանը, թե 50 տարի անց ինչպիսի՞ ճարտարապետական տեսք պետք է ունենա Երևանը:
6. Հազարավոր երևանցիներ մինչ օրս չեն կարողանում օրինականացնել փաստացիորեն տասնամյակներ շարունակ իրենց կողմից օգտագործվող և տնօրինվող անհատական բնակելի տները:
7. Քաղաքի երկրորդական նշանակություն ունեցող փողոցներն անբարեկարգ են, չունեն անհրաժեշտ լուսավորություն:
8. Թափառող շների խնդիրը լուրջ վտանգ է հանդիսանում մեզանից յուրաքանչյուրի համար:
9. Փոխարինված բազմաթիվ նոր վերելակներ արդեն իսկ ունեն վերանորոգման կարիք:
10. Երևանի նոր իշխանությունը պետք է մշակի ռազմավարական ծրագիր առաջիկա 20-30 տարիների ընթացքում բնակարանային հին ֆոնդի խնդիրը լուծելու համար:
11. Բազմաթիվ բակեր անբարեկարգ են, չկան ժամանակակից խաղահրապարակներ, երեխաների համար ստեղծված չեն բակային խաղերի կազմակերպման անհրաժեշտ ենթակառուցվածքներ:
12. Քարե և մետաղյա ավտոտնակների առկայությունն ստվերում է քաղաքի ընդհանուր տեսքն ու խաթարում քաղաքացիների ընդհանուր բարեկեցությունը: Աստիճանաբար պետք է ստեղծվեն ստորգետնյա ավտոտնակներ, իսկ այժմյան քարե ու երկաթյա ավտոտնակների օգտագործման փոխարեն քաղաքապետարանը պետք է կատարի բարեկարգման աշխատանքներ՝ ստեղծելով նորանոր այգիներ, պուրակներ ու կանաչապատ տարածքներ:
13. Փողոցային առևտրի գոյությունն արգելակում է Երևանի ռազմավարական զարգացումը: Պետք է խստորեն արգելել փողոցային առևտուրը՝ բոլոր քաղաքացիների համար ստեղծելով հարմարավետ պայմաններ առևտրի համար:
14. Համատիրություններն այդպես էլ չկայացան: Անհրաժեշտ է որակապես բարեփոխել համատիրությունների համակարգը: Երևանցին պետք է հստակ իրազեկ լինի, թե

որտե՞ղ և ի՞նչ հիմնավորմամբ են ծախսվում համատիրություններին վճարվող գումարները։

15. Պետք է ներդնել բազմաբնակարանային շենքերի կառավարման ու երևանցիներին մատուցվող ծառայությունների՝ որակապես նոր ու կենսունակ համակարգ։

Սիրելի՛ Երևանցիներ

«Արդար Հայաստան» կուսակցությունը, ստանալով Ձեր վստահության քվեն և ստանձնելով Երևանի քաղաքային իշխանությունը՝ առաջիկա հինգ տարիներին մայրաքաղաքում կիրականացնի հետևյալ քայլերը.

Երևանը բարեփոխենք կոնկրետ քայլերով

1. Կներդնենք քաղաքի 24 ժամյա կառավարման համակարգ, կամ պատկերավոր ասած՝ գիշերային քաղաքապետի ինստիտուտ։
2. Քաղաքապետարանում չաշխատող, սակայն աշխատավարձ ստացող մարդիկ չեն լինի։ Պարգևավճար կստանան բացառապես իրենց գործը բարեխղճությամբ կատարող աշխատակիցները։
3. Քաղաքապետարանի համակարգի ծառայողական ավտոմեքենաների թիվը կկրճատվի 70 տոկոսով։
4. Կստեղծենք Երևանի բյուջեի նկատմամբ հսկողություն իրականացնող ավագանու ստուգող ու վերահսկող մշտական հանձնաժողով, որի անդամների մեծամասնությունը կհանդիսանան ավագանու ընդդիմադիր խմբակցությունների ներկայացուցիչները։
5. Ավագանու կազմում կստեղծենք հակակոռուպցիոն հանձնախումբ, որին կվերապահվի քաղաքային բյուջեի, լիցենզիաների ու թույլտվությունների ու կայացված որոշումների օրինականության նկատմամբ հսկողության գործառույթ, որի անդամների մեծամասնությունը կհանդիսանան ավագանու ընդդիմադիր խմբակցությունների ներկայացուցիչները։
6. Կներդնենք քաղաքապետարանի ենթակայության ներքո գտնվող կրթական համակարգի զարգացման որակապես նոր ռազմավարություն, կզարգացնենք ուսուցչական և վարչական անձնակազմի սոցիալական պաշտպանության համակարգը, կաջակցենք տաղանդավոր և շնորհալի երիտասարդներին գիտական, ստեղծագործական ծրագրեր իրականացնելիս։
7. Դպրոցական ճաշարաններում աշակերտների համար սննդի վաճառքը կկազմակերպենք՝ ելնելով ըստ առողջ ապրելակերպի չափորոշիչների։
8. Կվերանորոգենք քաղաքապետարանի ենթակայության ներքո գտնվող դպրոցները, մանկապարտեզներն ու պոլիկլինիկաները։
9. Ավագանու իրավասությունների շրջանակում կընդլայնենք վարչական շրջանների աշխատակազմի լիազորությունները։
10. Շեշտակիորեն կավելացնենք Երևանի բյուջեն՝ քաղաքի կառավարման արդյունավետությունը բարձրացնելիս, ինստիտուտներ կայացնելիս։
11. Երևանի որոշ փողոցներ կվերանվանենք Հայաստանի Հանրապետության և հայ ժողովրդի համար անուրանալի ներդրում ունեցած անձանց անուններով։

12. Կիրականացնենք կիսակառույց շինությունների հաշվառում, դրանց սեփականատերերին կտրամադրենք ողջամիտ ժամկետ՝ շինարարությունն ավարտին հասցնելու, կամ այդ շինություններն օտարելու, կամ ապամոնտաժելու համար:
13. Երևանում կբացառվի ապօրինի շինարարությունը, ինչպես նաև քաղաքաշինության ոլորտում որևէ տեսակի հովանավորչությունը:
14. Կստեղծենք Երևանի քաղաքապետին կից ճարտարապետական խորհուրդ:
15. Կստեղծվի նպաստավոր պայմաններ ներդրողների համար, որպեսզի «Փոքր կենտրոնը» զարգանա աշխարհի զարգացած մայրաքաղաքների կենտրոններին համահունչ ենթակառուցվածքներով:
16. Կանձնագրավորենք մայրաքաղաքի բնակարանային ֆոնդը, կստեղծենք բնակարանային ֆոնդի վերակառուցման և պահպանման համալիր ծրագիր:
17. Հինգ տարվա ընթացքում ամբողջողվին կլուծենք ինքնակամ կառույցների օրինականացման հարցը:
18. Հինգ տարվա ընթացքում ամբողջովին կլուծենք իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանած անհատական բնակելի տների կարգավիճակի հստակեցման հարցը:
19. Կպահպանենք քաղաքի ազգային ճարտարապետական, մշակութային հատուկ պահպանության գոտիները՝ բացառելով Երևանում որևէ ճարտարապետական հուշարձանի ապամոնտաժումը կամ ձևախեղումը:
20. Քաղաքի զարգացման տրամաբանության ներքո կկառուցենք նոր ճանապարհային ենթակառուցվածքներ, հնարավորության դեպքում՝ կուրվագծենք մետրոյի նոր կայարանների զարգացման հնարավորությունը:
21. Կիրականացնենք սոցիալական բնակարանաշինություն՝ երիտասարդ ընտանիքներին հնարավորություն տալով տարաժամկետ վճարման պայմանով ձեռք բերել ինքնարժեքով բնակարան:
22. Կմեկնարկենք վթարային շենքերի քանդման աշխատանքները՝ քանդված շենքերի բնակիչներին ապահովելով համարժեք բնակարաններով:
23. Հիմնովին կվերափոխենք ու կկանոնակարգենք գերեզմանատների և պանթեոնների գործունեությունը՝ բացառելով որևէ հովանավորչություն ու արատավոր պրակտիկա:
24. Կներդնենք ավտոկայանատեղիների ժամանակակից համակարգ՝ ուսումնասիրելով զարգացած քաղաքաների փորձը:

<u>Երևանը դարձնենք «խելացի» քաղաք</u>

25. Երևանն աստիճանաբար կդառնա էներգախնայող, էկոլոգիապես մաքուր, անվտանգ ու խելացի քաղաք, որի համար անհրաժեշտ է ձևավորել խելացի քաղաքապետարան և կրթել խելացի քաղաքացի:
26. Կներդնենք միջազգային չափորոշիչներին համապատասխան հասարակական տրանսպորտի երթուղային ցանց, ինտեգրված սակագնային և տոմսային համակարգ, հարմարավետ ավտոբուսներ, ուղևորների տեղեկատվական համակարգ, որը ներառելու է առկա չվացուցակի ժամատախտակների բարելավում և ընդլայնում, բջջային հավելված և կայք:

27. Երևան քաղաքի անհրաժեշտ բոլորհատվածներում կտեղադրենք ժամանակակից լուսաֆորներ։
28. Հինգ տարիների ընթացքում Երևանի բոլոր փողոցներում կտեղադրվեն էլեկտրախնայող լամպեր։
29. Հինգ տարիների ընթացքում քաղաքի արտաքին տեսքը բարելավելու նպատակով վերգետնյա լարերը կանցկացվեն ստորգետնյա խողովակաշարերով։
30. Կնպաստենք էժան և փոքրածավալ փոխադրամիջոցների գործածմանը՝ ապահովելով դրանց շահագործման հետ կապված անվտանգության բոլոր կանոնների կիրառումը։
31. Կստեղծենք հետիոտնային փողոցներ։
32. Հնարավորության դեպքում կլայնացնենք մայթերը՝ ստեղծելով ուղիներ և գծեր հեծանվորդների համար։
33. Քաղաքային տրանսպորտը և մետրոպոլիտենը կաշխատեն մինչև կեսգիշեր։
34. Ամբողջությամբ կթարմացվեն Երևանի ճանապարհային նշանները՝ բացառելով դրանց և լուսացույցների վատ տեսանելիությունը վարորդների, հետիոտների համար։

Երևանը դարձնենք այգի-քաղաք

35. Կվարենք Երևանը «Այգի-քաղաք» վերածելու քաղաքականություն։ Կներդնենք որակապես նոր բնապահպանական հայեցակարգ։
36. ԴԱԼՄԱՅԻ ԱՅԳԻՆԵՐԻՑ մնացած 238 հա կվերածենք խոշոր այգի-անտառի, որտեղ կլինեն լողավազան-լճակներ՝ քաղաքացիների ամառային հանգստի ապահովման համար։
37. Հինգ տարվա ընթացքում մայրաքաղաքում և նրա շուրջը կտնկենք 1 միլիոն ծառ։
38. Կհիմնադրենք քաղաքային անտառ՝ հնարավորինս այն համապատասխանեցնելով բնական անտառի պայմաններին, որում կտեղադրվեն հայկական բոլոր թագավորությունների արքաների արձանները։
39. Շոշափելիորեն կընդլայնենք բակային կանաչ տարածքներն ու խաղահրապարակները։
40. Քաղաքի բոլոր վարչական շրջաններում կստեղծենք խոշոր հանգստի գոտիներ։
41. Կկառուցենք թռչունների կենդանաբանական այգի։
42. ՀՀ օրենսդրության շրջանակներում կիրականացնենք թափառող կենդանիների ստերջացում և ախտահանում, ծայրահեղ անհրաժեշտության դեպքում՝ նաև քնեցում։ Համալիր լուծում կտանք թափառող շների հարցին։
43. Կկառուցենք բնապահպանական ստանդարտներին համապատասխանող նոր աղբավայր՝ նպաստելով Երևանի աղբահանության, սորտավորման և վերամշակման խնդիրների լուծմանը՝ դարձնելով աղբը շահութաբեր, ինչպես զարգացած երկրներում է։
44. Կուժեղացնենք քաղաքային իշխանության վերահսկողությունը շրջակա միջավայրի՝ օդի, ջրի որակի, կանաչ տարածքների պահպանման նկատմամբ, աղբամշակման բարձր չափանիշների սահմանմամբ։
45. Կներդնենք ու կիրագործենք Հրազդանի կիրճի զարգացման ռազմավարական հայեցակարգը՝ նպատակ ունենալով այն դարձնել Երևանի ամենահեռանկարային զարգացման ուղղություններից մեկը։

46. Երևանի բոլոր վարչական շրջաններում ու մատչելի վայրերում կնպաստենք հանրային զուգարանների կառուցմանը՝ համագործակցելով մասնավոր հատվածի հետ։

Սիրելի՛ երևանցիներ

Սույն ծրագիրը վերջնական չէ, և ծրագիրը կհամալրվի նաև Ձեր առաջարկությունների հիման վրա։

«Արդար Հայաստան» կուսակցությունը Երևանի կառավարումն իրականացնելիս առաջնորդվելու է հետևյալ սկզբունքներով.

Քաղաքային իշխանությունը չենք օգտագործելու բարեկամների, հարազատների ու ընկերների բարեկեցությունն ապահովելու համար։

Չենք խուսափելու քաղաքական պատասխանատվությունից, պոպուլիզմին տուրք չենք տալու, լուծելու՛ ենք քաղաքի առջև ծառացած խնդիրները։

Կաշառք չենք վերցնելու և որևէ մեկին չենք կաշառելու՛, չենք գողանալու։

Որևէ իրավախախտ անպատիժ չի մնալու և որևէ անմեղ մարդ չի պատժվելու։

Գործելու ենք արդարամտությամբ ու մարդասիրությամբ, պատասխանատվության զգացումով ու կատարողական խիստ կարգապահությամբ։

Չենք զբաղվելու խարդավանքներով ու բանսարկություններով, այլոց ստեղծած բարիքները խլելով ու մարդկանց ունեզրկելով։

Չենք ստելու, սին խոստումներ չենք տալու, պետության ու հասարակության ունեցվածքը չե՛նք յուրացնելու ու վատնելու։

Չենք տառապելու հավերժության ու անփոխարինելիության մոլուցքով, պարտության դեպքում արժանապատվորեն հեռանալու ենք։

Ժողովրդին չենք պառակտելու, նախկինների սխալներից դասեր ենք քաղելու, նախկինում ձեռք բերված որևէ նվաճում չենք ստվերելու։

Թե՛ իշխանավարման ընթացքում և թե՛ դրանից դուրս՝ ՄԱՐԴ ենք մնալու։

Որպես վերջաբան

Ամենայն պատասխանատվությամբ հայտարարում ենք, որ Ձեր վստահության քվեն ստանալու դեպքում պարտավորվում ենք առաջիկա հինգ տարիների ընթացքում իրականացնել գործող իշխանության կողմից 2018թ. տրված հետևյալ խոստումները, որոնք վերջիններս խոստացան ու չկատարեցին.

1.Կկառուցենք Ծովակալ Իսակովի պողոտայից մինչև Արշակունյաց պողոտա՝ Կենտրոնը շրջանցող ճանապարհը, ինչն իր մեջ ներառելու է Արշակունյաց պողոտայի վրա նախատեսված հանգույցի և Հրազդան գետի վրայով անցնող նոր կամրջի կառուցում։

2.Կիրականացնենք թվով 3 տրանսպորտային հանգույցների նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթների մշակման և շինարարության իրականացման համար ներդրումների ներգրավմանն ուղղված աշխատանքներ. Արշակունյաց պող., Ագաթանգեղոսի և

Գր.Լուսավորիչ փողոցների հատման հանգույց (կրկեսի խաչմերուկ), Արշակունյաց պող. և Գ.Նժդեհի փողոցի հատման մասում՝ «Հայրենիք» կինոթատրոնի խաչմերուկ, Արշակունյաց պող., Բագրատունյաց պողոտա (Աշխատանքի հրապարակ):

3.Համայնք-մասնավոր հատված համագործակցությամբ կստեղծենք «Հին Երևան» պատմաճարտարապետական միջավայրը,

4. Կվերակառուցենք Երևանի 33-րդ թաղամասը,

5.Համալիր կկառուցապատենք Երևան քաղաքի գլխավոր հատակագծով նախատեսված Տիչինա, Կոնդ, Սարի թաղ թաղամասերը,

6.Կկառուցենք ստորգետնյա ավտոկայանատեղեր Շահումյանի և Սախարովի հրապարակներում,

7. Կիրականացնենք «Էրեբունի», «Կարմիր Բլուր» և «Շենգավիթ» պատմահնագիտական արգելոց թանգարանների վերակառուցման ծրագրերը՝ կառուցելով զբոսաշրջիկների սպասարկման կենտրոններ,

8.Կկառուցենք «Զվարթնոց» օդանավակայան տանող նոր ավտոմայրուղի,

9.Կկառուցենք Կոմիտասի պողոտային զուգահեռ այլընտրանքային ճանապարհ,

10.Կստեղծենք «Հաղթանակ» զբոսայգում միջազգային չափանիշներին համապատասխան հանգստի գոտու և զվարճանքի կենտրոն (27հա),

11.Ավարտին կհասցնենք միջազգային չափանիշներին համապատասխան Կենդանաբանական այգու վերակառուցումը,

12.Կկառուցենք Երևանում նոր ճոպանուղային ցանց: